Յ. Սեր. Գրիգորյանց.
Բրդուկիրվեր
Սուր և հուր
Հր. 1908թ.

891,99
S-38

1908թ.

ԼՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ԻՆՏԷՐՎԻՒ

1905 ԹՒԻ
ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻՑ ԵՒՍ ՄԻ
ԷՊԻԶՕԴ

ԼՐԱՏՈՒՅԹ ՑԱՒԵԼԻԱՆ

ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ

(Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐ)

ԱՐԴԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԻԱՆ ԳՐՔԻ

1908
Է. Տեր-Գրիգորեանցի տպարան
ԵՐԵՒԱՆ

891.99
Ց-38

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Այս էպիզոդը, որ ինչ ինչ պատճառներով գրուեց «ՍՈՒՐ և ՀՈՒՐ» գրքի ապագրութիւնից յետոյ, այսօր, ժամանակաւորապէս, մինչև նրա երկրորդ հրատարակութիւնը, ապագրում ենք առանձին գրքոյկով, իբրև նրան յաւելուած:

Սա, ինչպէս և «ՍՈՒՐ և ՀՈՒՐի» բոլոր արարածները, մի առանձին էպիզոդ է, կամ մի ինքնուրոյն գրուածք, որ միևնոյն ժամանակ դառնում է հետազոտական շարունակութիւն ու լրացումն յիշած գրքին և կազմում է միւս բոլոր էպիզոդ—արարածների հետ, ի միասին առած, մի կատարեալ ամբողջութիւն:

Սրա տեղն է «ՍՈՒՐ և ՀՈՒՐի» մէջ IV-րդ արարածից յետոյ, կամ V-րդ արարածից առաջ. իսկ նոյն գրքի մէջ եղած V-րդ և վերջին էպիզոդը դառնում է ուրեմն VI-րդ և վերջին արարած:

.10 NOV 2011
Սկ.

V

ԻՆՏԷՐՎԻՒ

58261
14.08.2013

ԱՆՁՈՒՆՔ

ՀԱՅՈՎԻ
ՄԻՐԱՔԵԱՆ
ՄԱՐՈՒԳԵԱՆ
ԼԻՆՏՕՆ
ԱՐՄԵՆԵԱՆ
ՀՄԱՅԵԱԿ
ՋԻՆԻՈՐ

Սեպտեմբերի սկզբներում. 1905 թ.

ԹԻՖԼԻՍ

ԱՐԱՐՈՒԱԾ Ե.

Տեսարանը ներկայացնում է, ինքնապաշտպանության կազմակերպության կենտրոնական գրասենեակը:

Մեծ ընդարձակ սենեակ երկրորդ յարկում. վայելուչ կահաւորուած: Երեք սեղան, աթոռներ եւ հեռախօս:

Աջ եւ ձախ դռներ: Խորհում լուսամուտներ, որոնցից երեւում է փողոցը:

ՏԵՍԻԼ Ա

ՄԻՐԱՔԵԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Միրաքեանը եւ Մարուգեանը նստած իրենց սեղանների առաջ ստորագրում են թղթեր, կարդում են գրագրութիւններ եւ ստացած հեռագիրներ):

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Հրմ. տեսնում ես, Միրաքեան, այս թուրքերի արածը:

ՄԻՐԱՔԵԱՆ

(Հարցական նայում է նրա վրայ):

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Բագուից ստացած Հայոցու այս հեռագրի մասին է խօսքս: Նեղ տեղն ընկան թէ չէ, իսկոյն հաշտութիւն:

ՄԻՐԱՔԵԱՆ

Խնդրել հաշտութիւն, կնշանակէ՝ գիտակցել պարտութիւն:

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Չէ, հիմա էլ դեռ չդիտակցեն։ Այն դիմադրութիւնները, որ այս օրերս մերոնք ցոյց տուին թէ Զուշիում և թէ Բագուում, այն դիրքերը, որ խլեցին մերոնք թուրքերից ու բռնեցին նրանց տեղերը, այն կոտորածն ու աւերմունքը, այն շանթ ու կայծակները, որ մերոնք տեղացին նրանց գլխին՝ նրանց արածի հանդէպ և վերջապէս՝ այն եռապատիկ ու քառապատիկ աւելի վնասները, որ մերոնք հասցրին նրանց, թէ անտեսականապէս և թէ մարդկային զոհերով—այդ բոլորը դիւրին չէր և բաւականին ապացոյցներ են, որ թուրքերը պէտք է ընկճէին։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ժամանակաւորապէս. այո։ Բայց տեսնում ես, խոկոյն հաշտութիւն են խնդրում։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Բայց մի՞թէ այդպիսի հաշտութեանց վրայ պիտի յոյս դնել և այսուհետև։

ՄԻՐԱՔԵԱՆ

Երբէ՛ք Փոքձերը միշտ հակառակն են ցոյց տալիս։ Զուշիումը այս օրերս երկու անգամ կոտորած սկսեց և երկու անգամ էլ հաշտութիւն կնքեց։ Իսկ հետևանքը։ Հետևանքն այն եղաւ, որ թուրքերն այնուամենայնիւ բռնեցին Ելիսախից մինչև Աղդամ տարածութիւնը և մորթոտեցին ու մորթոտում են երթևեկող հայ արանց, կանանց և երեխաներին։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Իսկ եթէ մեզ յաջողի նորին անել Սակեարեանի տարածութիւնը բռնելով՝ Աղդամից մինչև Զուշի։ Այն ժամանակ։

ՄԻՐԱՔԵԱՆ

Այն ժամանակ դարձեալ առաջ կդան, ինչպէս և ամեն անգամ, շողոքորթութիւն, ծծնութիւն, «Ձէյթանի գործ» և հաշտութեան խնդիրներ։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Իսկ այնուհետև կրկին նոյն խաղը։

ՄԻՐԱՔԵԱՆ

Իսկ այնուհետև կսկսեն նորանոր խարդաւանանքներ ու նորանոր կոտորածներ։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Եւ ի՞նչպէս չեն հասկանում իրենց դրութիւնը։ Ի՞նչպէս չեն հասկանում, որ հայերից օգուտ չեն կարող տանել և որ իրենք քառապատիկ աւելի են տուժում։

ՄԻՐԱՔԵԱՆ

Խաժամուժ ամբոխի և գազանաբարոյ խուժանի յատկանիշն է այդ։ Վրդ յարձակող գազանին, որքան հարուածես, նոյ, փախչելու փոխարէն, աւելի ևս վրայ կտայ։ Բայց այդ չէ հարցը։ Հետաքրքիրն այն է, թէ մինչև երբ մենք պիտի խաղանք այդ «հաշտութիւն» անուանուած խաղը, այդ արդիկոմեդիան։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Վրդովուած) Չ՚գիտեմ։ Այդ պիտի հարցնել Հայոցուց։

ՄԻՐԱՔԵԱՆ

(Նոյնպէս) Եւ կ՚հարցնեմ։

ՏԵՍԻԼ Բ։

ՆՈՑՆԵՐ ԵՒ ՀԱՑՈՑԻ

ՀԱՑՈՑԻ

(Դալով ծախից բարեւում է երկուքն էլ մտերմաբար)։ Սակեարեանի անցքի մասին դեռ տեղեկութիւն չկայ։

ՄԻՐԱՔԵԱՆ

Եւ ոչ մի։

ՀԱՑՈՑԻ

Օ՜հ. մի՞թէ մինչև հիմա չկարողացան բռնել այդ անցքը մերոնք։ Դա խիստ անհրաժեշտ է։ Պրկնեցէք հեռագրով այդ պահանջը։ Ուրիշ ինչ կայ։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ահա նոր տեղեկութիւն։ Ցաճատից։ Այս չորրորդ անձն է, որ կրկնում է Բորչալուի թուրքերի մտադրութիւնը։

ՀԱՑՈՑԻ

Յարձակուել Թիֆլիզի վրայ։

ՄԻՐԱՔԵԱՆ

Այո։

ՀԱՑՈՑԻ

(Մտածմունքով) Զարմանալի է...

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Չի կարելի ուշադրություն չդարձնել։

ՀԱՑՈԳԻ

(Նոյնպէս) Այո...

ՄԻՐԱՔԵԱՆ

Մենք պէտք է ծրագիր կազմենք և այդ յարձակման դէմ։ Կարող ենք յանկարծակի գալ։

ՀԱՑՈԳԻ

Կազմեցէք ուրեմն և ինձ ցոյց տուէք։ Իսկ ձեզանից ով ունի նոր ծրագիր առաջարկելու։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Այս անգամ ես ունեմ։

ՀԱՑՈԳԻ

Շատ լաւ։ Շատ է։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Տաս տասնու մէկ յօդուածներ։

ՀԱՑՈԳԻ

Հետաքրքիր է։ Սպա մի կարդա, մօտաւորապէս ծանօթանանք։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Իսկոյն։ (Հանելով թղթերի տակից ծրագիրը) 1) Արգելել արբեցողութիւնը մեր զինուորների մէջ. 2) Դիրքերում եղած ժամանակ խստիւ արգելել ծխախոտ ծխելը. 3) Իւրաքանչիւր կուռող ոյժ, եթէ նա զինուոր չէ, պիտի ունենայ իր ծառայութեան տեղին, իսկ նրա գործատէրը պարտաւոր պիտի լինի նրա տեղը պահել մինչև կռուի վերջը և վճարել նրա ռոճիկը լիովին. 4) Ունենալ պրիգմատական հեռագիտակներ թշնամուն հեռից դիտելու և որոշելու համար. 5) Միանգամայն դուրս հանել կուռող կազմի միջից ուռանողներին և անչափահասներին. 6) Ամեն մի տան մէջ մացնել հրացանաձգութեան վարժութիւններ «դրօրինկայով». 7) Եղած ռումբեր երբէք չպահել մարդաբնակ տեղերում և վերացնել պատրոյդաւորները. 8) Ռազմամթերքը տեղափոխելիս նպատակայարմար է հագնուել տղբատի ցնցոտիներ և ունենալ նոյնպիսի խուրջիններ. 9) Տներում ունենալ ծծմրաթուռուռ՝ նրբ մանող խուժանի վրայ ցանելու համար. 10) Փողոցներում խուզարկու ռուս զինուորներին հետևող ճարպիկ մարդիկ պատրաստել՝ բնակիչներից խլած զէնքերը անմիջապէս

գնելու համար. և 11) Ցայտնի մարդկանց միջոցով՝ դրաւել զինուորականներին, թէ կաշառքներով և թէ հիւրասիրութիւններով։

(Միջոց։ Լռութիւն)։

ՀԱՑՈԳԻ

Այո... Մի քանիսը ընդունելի են և անյեսաձգելի. մի քանիսը՝ վիճելի, մի քանիսն էլ՝ կրկնութիւններ են երևում։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Բայց ես նոր լուսաբանութիւններ ունեմ։

ՀԱՑՈԳԻ

Հիանալի։ Կանենք։ Կարգադրիր, որ բոլորեքեան այս երեկոյ ժողովեն։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Հերթական ժողովը շարաթ երեկոյեան է։

ՀԱՑՈԳԻ

Կարիքը հերթի չի սպասում։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Շատ լաւ։

ՀԱՑՈԳԻ

Ուրիշ։

ՄԻՐԱՔԵԱՆ

Քանի գնում, Գանձակի վրայ յարձակումն էլ անխուսափելի է դառնում։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Սև ամպերի նշոյլներ են երևում։

ՄԻՐԱՔԵԱՆ

Եւ այդ յարձակումը կարող է սկսուել այսօր, կամ վաղը և կամ ամիսներից յետոյ։

ՀԱՑՈԳԻ

Մի ըսպէ անգամ չի կարելի կասկածել այդ մասին։ Սպասցոյց են այնտեղի թուրքերի շողոքորթ հաւաստիացումները, որ շարունակ շռայլում են հայերին։ Պէտք է զգուշ լինել։ Նրանք լաւ դիտեն ծածկել իրենց անելիքը և քնեցնել հակառակորդին։ Մենք կատաղուն պիտի տանք։ Ջուչիի և գաւառների կատարածները Գանձակի նախերգանքներն են։ Պարարատի են այնտեղ մերոնք։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ցամենայն դէպս քնած չեն։

ՀԱՅՈԴԻ

Զէնքի պակասութիւն չունենք։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Քաղաքների մասին կարելի է ապահով լինել։ Գիւղերն ենք զէնքի կարօտ։

ՀԱՅՈԴԻ

Ո՞րքան զէնք ունենք հիմայ։

ՄԻՐԱՔԵԱՆ

Մեր պահեստներում։ Եւ ոչ մի հատ։ Վերջին քանակն ուղարկեցինք Դարալագեազի, Նախիջևանի և Զանգեզուրի գաւառները։

ՀԱՅՈԴԻ

Սխ, այո։ Իսկ ենթր կատարեն նորերը։

ՄԻՐԱՔԵԱՆ

Երեք շորս շաբաթից յետոյ միայն կարելի է սպասել մեծ ու փոքր քանակներով։

ՀԱՅՈԴԻ

Ուշ է։ Շատ կուշանայ։ Մեր գիւղերը կաուժեն։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Արւեց շատ աւելին, քան թէ կարելի էր։

ՀԱՅՈԴԻ

Այնուամենայնիւ ոչինչ չենք արել։

ՏԵՍԻԼ Գ

ԵՈՑՆԵՐ ԵՒ ԱՐՄԵՆԱՆ

ԱՐՄԵՆԵԱՆ

(Ներս է ոչ դոնկոս)։ Պէտք է յայտնեմ ձեզ, որ զէնքերի, ապաւէնները չեն գտարկուած գաւառներից. այն ինչ դրանք ահագին գումարներ են կազմում։

ՀԱՅՈԴԻ

Լաւ է լիչեցրէք։ Հեռագրեցէք իմ անունից, որ եւ խստիւ պատուիրում եմ, այլ ևս ոչ մի ռոպէ չուշացնել այդ գումարները։ Մենք կարող ենք ենթարկուել շատ անհաճելի դրութեան։ Դրանք պէտք է զէնք գտնայ և զէնքը զրամ։

(Արմենեանը գնայ)։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ի զէպ. Դարալագեազում Սարիբէկը թոգել է մեր կազմակերպութիւնը և ինքնագլուխ է գործում։ Կազմել է իւր համար նրեք խմբակներ։

ՀԱՅՈԴԻ

Մեր զէմ չէ՞ գործում։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ոչ։ Բայց մեղ...

ՀԱՅՈԴԻ

Մենք կորուստ չունենք։ Դեռ պէտք է խրախուսել։ Ես անձամբ ճանաչում եմ նրան։ Եւ հասկանալի է նրա հոգեբանութիւնը։ Ամբողջ Դարալագեազը կը ընկնի նրա ձեռքին և մենք, այդ գաւառի կողմից, միանգամայն ապահոված ենք։ Մեր կարգադրութեանց մասին նրան էլ տեղեկութիւններ տալ։

ՏԵՍԻԼ Դ

ՆՈՅՆՔ ԵՒ ԶԻՆԻՈՐ

(Զինուորը բերում է ձախ կողմից հեռագիրներ։ Միրաքեանն յանկարծ տոնելով, կարդում է)։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ուղարկեցէք անմիջապէս գտնել երեսուն բուրլի։ Սովամտահ Յլինեմ մինչև եօթ օրը։ Բարեկամներից ոչ մի յոյս։ Բազէն։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ո՞րտեղից ճարենք հիմա այդ երեսուն հրացանը։

ՄԻՐԱՔԵԱՆ

(Կարդում է միւսը)։ Շուշի։ այս երկու օր է, ինչ Ասկերանը բռնուած է. Թուրքերի երթևեկութիւնը ընդհատուած է. մնացել են անզօր. այսօր հաշտութիւն են խնդրում։ Տնօրինեցէք։

ՀԱՅՈԴԻ

Ահա... Վերջապէս։ Բռնեց Ասկերանի տարածութիւնը և... հաշտութիւն։ Հեռագրեցէք դրանց, ինչպէս և Բազու, և ամեն տեղ.—միշտ ընդունել հաշտութեան ամեն մի առաջարկ։

ՄԻՐԱՔԵԱՆ

(Վրդովուած)։ Բայց...

ՀԱՅՈԴԻ

Դու միայն առաջ ես ընկնում, Միրաքեան։ Բայց, գրեցէք,

երբէք չհաւատալ այդ հաշուութիւններին։ Քուրդի հետ եղբայրացիր, փայտ ձեռքիդ վայր մի գցիր։ Սա հայկական առած է. խիստ հետաքրքիր սրան։

ՄԻՐԱՔԵԱՆ

(Երրորդը)։ Եղբօր ասէք՝ անմիջապէս ուղարկի գոնէ 60 ռուբլի։ Դրութիւններս կրիտիկական է։ Վարոս։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Գլուխը բռնելով) Դարձեալ հրացան։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ո՞րտեղից վերջապէս։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ճար չկայ. մեր այս տեղի գիւղացիների գէնքերը պիտի ուղարկել։ Ցեռաձգերն անկարելի է։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ի՞նչպէս։ Մեր գիւղացիներին թողնենք առանց գէնքի։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Մի առժամանակ, այո։ Այնտեղ կ'կռուեն, իսկ այս տեղ դեռ ոչինչ չէ նախատեսուում։

(Հայոցին խիստ մտախոհ է։ **Հեռախօսից ազդ։** Մարուգեանը իսկոյն մօտենում է եւ նոյնպիսի ազդով պատասխանում)։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Մարուգեան։ Ի՞նչ կայ։ Քսան եօթ բերդան փամփուշտներով։

ՀԱՅՈԳԻ

(Խիստ վրդովուած)։ Բռնել են։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ե՞րբ։ Երէկ։ Ինչի էիք քնել։

ՀԱՅՈԳԻ

Կաշառել։ Թէկուզ իրենց գնի չափով։ Թէկուզ աւելիով։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Կաշառել ինչ գնով և լինի։ Հ՞ը։ Ո՞ւչ է։ Արդէն օրինական ընթացք են տալ։

ՀԱՅՈԳԻ

Թո՛ւհ։ Ի՞նչ էք էշերի կանգնեցրել այնտեղ։ Այս քանի երբորդ անգամն է։ Տեսնում էք որ իշխանութիւնները մեզ չեն ինայում։ Ասել եմ, որ մենք պէտք է հետեւենք Թուրքերի օրի-

նակին՝—կաշառել միշտ և կաշառել առանց խնայելու։ Մի այսպիսի ժամանակ և 27 բերդան կորցնել... Մեծ տուգանքի ենթարկել դրանց։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Մօտենալով աջ դռան)։ Հմայեակ։ Եկ այստեղ։ (Սրանց)։ Դրա տեղը հիմա ես կհանեմ։

ՏԵՍԻԼ Ե

ՆՈՑՆԱՐ ԵՒ ՀՄԱՅԵԱԿ

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Հմայեակին)։ Ոստիկանատան պահեստում կան մօտ վաթսուն արագաձիգ հրացաններ։

ՀՄԱՅԵԱԿ

Այո։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Տաս տասնուհինգ հատ էլ այս օրերս են գրաւել քաղաքացիներից։

ՀՄԱՅԵԱԿ

Այո։ Մինչև անգամ աւելի։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Մեր խուզարկու խմբին կպատուիրես. քսան և չորս ժամւայ ընթացքում, որ այդ գէնքերը մեր պահեստում լինեն։

ՀՄԱՅԵԱԿ

(Գնալով) Իսկոյն։ (Անմիջապէս դառնալով)։ Իսկ եթէ ռումբերի կարիք լինի՝ ամբողջ ոստիկանութեան ուշքը գրաւելու համար գէպի զանազան կողմեր։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Եթէ միայն կարիք լինի։ Բայց անվնաս ռումբեր. որսանդոսա։

ՀՄԱՅԵԱԿ

Այդպիսի ռումբեր պատրաստի կան։

ՄԻՐԱՔԵԱՆ

Առաջ մի կամ երկու անգամ տարճանակ արձակել օդի մէջ, որ մարդիկ փախչեն և յետոյ ռումբերի դիմել։

ՀՄԱՅԵԱԿ

(Խիստ)։ Բայց ամենակարեւոր գէպքում... (Աւելի խիստ)։ Ո՛չ մի մարդկային զոհ կամ վնաս։

ՀՄԱՑԵԱԿ

Միամիտ եղէք։ Դուք իրաւունքը ունէք, մնայածի համար ես գլխովս եմ պատասխանատու։ (Գնաց)։

ՏԵՍԻԼ Զ

ՆՈՅՆՈՐ ԱՌԱՆՑ ՀՄԱՑԵԱԿԻ

ՄԻՐԱՔԵԱՆ

Հրաշալի միտք։ Բաղէնին և Վարոսին կարելի կլինի համարեա զոհացումն տալ։

ՀԱՑՈԳԻ

Իսկ Աղէքսանդրօպոլից դեռ տեղեկութիւն չկայ։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ոչ։

ՀԱՑՈԳԻ

Զարմանալի է...

(Հեռախօսի ազդ. Միրաքեանը մօտեցաւ)։

ՄԻՐԱՔԵԱՆ

Միրաքեան։ Անգլիական «Տայմսի» թղթակիցը։ (Լսում է երկար)։ Շատ լաւ։ Իսկոյն։ (Հայոգուն) «Տայմսի» թղթակիցը եղել է խմբագրատանը։ Մի քանի տեղեկութիւններ է ստացել այնտեղ։ Խմբագիրը խորհուրդ է տուել, որ ձեզ հետ անձամբ տեսնուի։ Հիմա գալու է։

ՀԱՑՈԳԻ

(Մտատրաղ)։ Լաւ։

ՄԻՐԱՔԵԱՆ

(Հեռախօսին)։ Ուրիշ։ Թուրքերը յարձակեցին։ Ինչպէս։ Ռուսական և մալականների զիւղերի վրայ։ Մեծ աւէրմունքներ պատճառեցին։ Լաւ։ (Հեռանում է)։

ՀԱՑՈԳԻ

Ահա։ Գուշակութիւններս կատարւում են։ Ուրիշ կերպ չէր կարող լինել։ Իշխանութեանց սարքած փսիխրիկներն իրենց գլխներին են կուտակուում։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Կառավարութեան առաջ դրած է հիմա մի ալտէրնատիւ. կամ իսկոյն զսպել թուրքերի գրգռուած ախորժակները և կամ անզօր ձեռնալով տանել ամբողջ խայտառակութիւնը։

ՄԻՐԱՔԵԱՆ

Անկասկած վերջինն է լինելու։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Որովհետև Իշխանութեանց ամբողջ գաղանիքը թուրքերի ձեռքին է։

(Հեռախօսի ազդ։ Մօտենում է Միրաքեանը)։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ո՞վ էք։ Մարգար։ Ի՞նչ կայ։ Սպանեցին մի թուրք։ Այս ըսպէին։

ՀԱՑՈԳԻ

(Դողալով) Ո՞վ համարձակուեց։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ո՞վ է։ Փալանդուզը՞։

ՀԱՑՈԳԻ

Խլել ձեռքից նրա զէնքը և աքսորել Կովկասից։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ուղարկել նրան այստեղ։

ՀԱՑՈԳԻ

Սուտ է մի անգամ ընդ միշտ. ոչ մի թուրք չպէտք է ընկնի հայի ձեռքից՝ առանց կռուի։ Իսկ մեր զինուորի—ես առաւել։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Այս օրերս գալու է Մուզաֆարխանը։ Լսում է նրա կեանքի դէմ էլ փորձ է լինելու։

ՀԱՑՈԳԻ

Գլուխները քարոզն են տալիս։ Այդպիսի բան լինելու չէ։ Իմանալ կրը է գալու և հետեւող զինուոր կարգել նրա անձի պաշտպանութեան համար։ Գրեցէք նոյնպէս բոլոր կոմիտեներին, որ ոչմի տեղ հայերը ի դուր թուրքի ձեռք չտան, ինչպէս և նախայարձակ չլինեն և անտեղի արիւն չթափեն։ Հայերը պիտի միմիայն պաշտպանողական դիրք բռնեն։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Արդէն գրուած է։

ՀԱՑՈԳԻ

Կրկնել։ Մեղաւորներին ամենախիստ պատժի ենթարկել։ Գրեցէք նաև, որ պէտք է ամենուրեք կազմակերպել լրտեսների խմբակներ։ Սրանք պիտի զանազան շորերով և դէմքերով մտնեն թուրքերի գիւղերը և դուրս քաշեն նրանց գործողութեանց գաղանիքները։ Այսպիսով հնարաւորութիւն կունենանք նրանց ապագայ անելիքները իրենց սաղմերի մէջ խեղդել։

ՄԻՐԱՔԵԱՆ

Վերջապէս մինչև երբ չկատարել և ներքսրծական դեր ու կեղծ հաշտութիւններով բաւականանալ։

ՀԱՑՈԳԻ

Մինչև որ հայերը պատրաստ կլինեն, իսկ թուրքերը չեն դադարիլ իրենց դաղանութիւններից։ Չի կարելի մի դիւղի պաշտպանութիւնով դոհել տասնեակ դիւղեր։ Չմոռանաք նաև, որ մեր ապադայի յարձակումները լինելու են միմիայն այն թուրք դիւղերի վրայ, որոնք յայտնի կլինեն իրենց անխիղճ աւէրմունքներով և պատրաստելիս կլինեն նորանոր կոտորածների։ Խաղաղ թուրքերի քիթն անգամ չենք տրորելու չէ։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Խաղաղ են նրանք, որոնք ճար չունեն և կազմում են փոքրամասնութիւն հայերի մէջ։

ՀԱՑՈԳԻ

Այդ միևնոյնն է։

ՄԻՐԱՔԵԱՆ

Բոլորովին միևնոյնը չէ։ Նրանք ոչ մի աւելի ձեռքից չէին թողնում պատահած հայ մարդուն այսպէս թէ այնպէս ոչնչացնելու։

ՀԱՑՈԳԻ

Ուրեմն։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Նոյնը պիտի անենք և մենք։

ՀԱՑՈԳԻ

Իսկ մենք ինչով պիտի զանազանենք նրանցից։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ի՞նչ զանազանութիւն և ինչու։ Ասում ցոյց տուղին պիտի դէմ անել վագրի ատամները։

ՀԱՑՈԳԻ

Վագրի ատամներ ցոյց տուր քո դէմ ցինուած ամբոխին, բայց ոչ անդէն անհատին։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ամբոխը անհատներից է կազմուում։

ՀԱՑՈԳԻ

Ցպանիր անհատին, եթէ նա յարձակուում է վրադ դէնքով։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Այդպէս չեն անում թուրքերը։

ՀԱՑՈԳԻ

Այդպէս պիտի անենք մենք։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ոչ. ներողութիւն։ «Ակն ընդ ակն, ատամն ընդ ատամն»։ Դա է մեր միակ փրկութիւնը։

ՀԱՑՈԳԻ

Դու ըմբոստ ես, Միրաքեան։

ՄԻՐԱՔԵԱՆ

Սա ըմբոստութիւն չէ. սա ժամանակի պահանջ է։ Երբ մենք Հուրիւլ աղայի մօտից հեռանալիս, իսկոյն չհանէինք մեր ատրճանակները, ծառան Երկուսիս էլ տեղն ու տեղը կթողնէր։ Այդպէս է, Մարուգեան։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ճիշտ է։

ՀԱՑՈԳԻ

Բայց ինչու դուք նրան չարեցիք նոյնը։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ինչու։

ՀԱՑՈԳԻ

Այո. ինչու։ Որովհետև նա վայրենի բնաղդներով էր դեկավարուում, իսկ դուք—խելքով։ Ահա մեր երկու ազգերի տարբերութիւնը։ Ահա կուլտուրայի և բարբարոսի զանազանութիւնը։

ՄԻՐԱՔԵԱՆ

Կուլտուրա... Մեր տունն այդ կուլտուրան քանդեց։

ՀԱՑՈԳԻ

Ոչ. մեր տունը կուլտուրան չինեց։ Չմոռանաս, որ դու մի ամբողջ կուսակցութեան գլուխն ես, պէտք է գործես խելքով։

ՄԻՐԱՔԵԱՆ

Հէնց այդ հիման վրայ ես չեմ կարող համաձայնել, մի թուրք սպանելու համար, խլել իմ դինուորից դէնքը և աքսորել նրան Գովկասից։

ՀԱՑՈԳԻ

(Թիստ) Հայոգին ես եմ, ես այդպէս եմ կամենում։

(Խորին լռութիւն։ Գոլիս է դինուորը և տալիս է մի այցեստուս Հայոգուն)։

ՏԵՍԻԼ Է

ՆՈՅՆԵՔ, ՁԻՆԻՒՈՐ ԵՒ ԹՂԹԱԿԻՑ

ՀԱՅՈԳԻ

Ներս հրաւիրիր։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ո՞վ է։

ՀԱՅՈԳԻ

«Տայմսի» թղթակիցը։

ԼԻՆՏՕՆ

(Գալով ձախ կողմից եւ վայրկենական հայեացք գցելով երեքի վրայ)։ Գ. Հայոգին։ (Միրաքեանը եւ Մարուգեանը շարժումով ցոյց են տալիս Հայոգու վրայ)։ Լինտօն։

ՀԱՅՈԳԻ

Ուրախ եմ։ (Բարեւում են։ Ծանօթացնելով Միրաքեանի եւ Մարուգեանի հետ) Գործակիցներս՝ պ. Միրաքեան, պ. Մարուգեան (Սեղմում են ձեռքեր)։ Համեցէք խնդրեմ։

ԼԻՆՏՕՆ

Կարող եմ յուսալ, որ չէիք զլանայ հաղորդել ինձ մի քանի տեղեկութիւններ։

ՀԱՅՈԳԻ

(Մտաքրքր)։ Խնդրեմ։

ԼԻՆՏՕՆ

Միջոց կունենայիք արդեօք բացատրել ինձ հայ-թաթարական այս ընդհարումների պատճառները։

ՀԱՅՈԳԻ

(Դժւարութեամբ)։ Դրա համար պէտք է դիմել և պատմութեանը։

ԼԻՆՏՕՆ

Դա շատ հետաքրքիր է մեր լրագրի համար։ Չէիք կամենալ արդեօք զէթ մի թուցիկ ակնարկ գցել և այդ պատմութեան վրայ, որ կարողանայի գոյ-մի ամփոփ եզրակացութեան։ Անշուշտ, եթէ չեմ խլում ձեր թանգագին րոպէները։

ՀԱՅՈԳԻ

(Մի փոքր մտածելուց յետոյ)։ Ինչու չէ։ Համեցէք։ (Նոյնպէս)։ Հայերն, ի վաղուց յետէ, կորցրած լինելով իրենց պետութիւնը, մնացել էին Իսլամ ազգերի բռնապետութեան տակ։ Նրանք ձգտում էին մի քրիստոնեայ ազգի հովանիի տակ լինել։ Հատերը

գաղթեցին Լեհաստան և Խրիմ։ Նախանցեալ դարից սկսած՝ իրենց յոյսը դրեցին Ռուսաստանի վրայ և ապա անընդհատ դրկանքներով ու տառապանքներով, խելքով ու արիւնով օգնեցին նրան նախ՝ տիրելու Խրիմին և ապա՝ Անդրկովկասին։ Այդպիսով հայերի մի մասը ազատուեց իր կացութիւնը։ Բայց Տաճկաստանում մեծամասնութեան դրութիւնը նոյնն էր մնում։ 1861 թուին՝ Զէյթունի հայերը զէնքով ապստամբեցին։ Դուրս վանդեցին տաճկաց զօրքին Կիլիկիայից և ինքնավարութիւն հաստատեցին այնտեղ։ Տաճկաց կառավարութիւնը դիմեց դանազան խաղերի, հաւատիացումների և նենգ բաղաքականութեան։ Հայերը հաւատացին։ Զօրքը կրկին ներս մտաւ։ Անցան տարիներ։ Հեղինեակ Սուլթանի բաղաքականութիւնը փոխուեց, խոստացաւ, ճնշումները ծայրայեղութեան հասան։ Նոյնպիսի դրութիւն ստեղծուեց Հայաստանի և միւս մասերում։ Հայերի դրութիւնն այնտեղ անտանելի դարձաւ։ Այն ինչ մենք, Կովկասում, շատ զոհ էինք մեր կառավարութիւնից։ Գոհ մինչ այն աստիճանի, որ ոչ մի հայ, հացի ժամանակ, թէ իր տանը և թէ հրաւէրներում, չէր վերցնի իր առաջին բաժակը, եթէ նա չբարեմաղթէր Ռուսաց կայսեր կենաց համար, նրա գահի հաստատութեան, նրա սրի զօրութեան համար։

ԼԻՆՏՕՆ

Եւ ուզեցաք մի այդպիսի դրութիւն էլ ստեղծել հայերի համար նաև Տաճկաստանում։

ՀԱՅՈԳԻ

Անշուշտ։ Վերջացաւ Ռուս-Տաճկական պատերազմը։ Ամեն ինչ խաղաղուեց։ Բայց Տաճկական բռնապետութիւնը հայերի վերաբերմամբ աւելի ևս խստացաւ։ Նախ՝ որովհետև մենք թեև ութիկոնը էինք դարձել Ռուսաստանին՝ նրա և այդ պատերազմական յաջողութեան համար և ապա՝ որովհետև առաջ էին եկել Սան-Ստէֆանոյի դաշնագրի 16-րդ և յետոյ Բերլինի 61-րդ յօդուածները։

ԼԻՆՏՕՆ

Այո, այո...

ՀԱՅՈԳԻ

Կովկասում այնուհետև ստեղծուեցին յեղափոխական կազմակերպութիւններ հայերից։ Անցան Տաճկաստանի սահմանները։

Ռաբի կանգնեցրին այնտեղի հայերին և սկսեց համարեա բացարձակ կռիւ։

ԼԻՆՏՕՆ

Տաճկաստանին ընկճելու համար։

ՀԱՅՈԳԻ

Ոչ, սէօր. այդպէս երբէք չեն մտածել։ Ուզում էին դրանով գարձնել լուսաւորեալ Եւրոպայի ուշադրութիւնը հնծեալ հայ ժողովրդի վրայ, յուսալով, որ այդ Եւրոպան կմիջամտէր տանելի գարձնելու նրա կացութիւնը Տաճկաստանում՝ դէթ յիշածս յօդուածների հիմունքներով։

ԼԻՆՏՕՆ

Բայց։

ՀԱՅՈԳԻ

Բայց չարաչար սխալուեցին։ Նրանք մոռացել էին, որ Բիսմարկի համար «ամբողջ հայկական հարցը իր մի փոած զինուորի ոսկրներին չարժէր», իսկ «Անգլիայի նաւերը չէին կարող բարձրանալ փոքր Ասիայի լեռները»։

ՄԻՐԱՔԵԱՆ

Մեր յոյն Անգլիան էր. նա էլ դաւաճանեց մեզ։

ԼԻՆՏՕՆ

(Գլուխը կախելով) Այո. ճիշտ է։

ՀԱՅՈԳԻ

Ճնշուածների պաշտպան երջանկայիշատակ Աղեքսանդր II կայսրը վաղուց չկար։ Նա ընկել էր չարագործների դաւերից։ Իսկ Աղեքսանդր III-ի նոր քաղաքականութեանը ձեռնտու չէր հայերի այս արթնանալը։ Սա սանակոխ արեց հայերիս մասին արձակած Ռուս կայսերների բոլոր հրովարտակներն ու արտօնութիւնները. հետևեալ առաջ բերեց խստութիւններ, ճնշումներ, խուզարկութիւններ, բանտեր և հալածանք։ Լօբանով—Ռաստովսկու քաղաքականութիւնն էլ, որ նպատակ է ունեցել ձեռք ձգել «Հայաստանը առանց հայերի», Տաճկաստանում Բարդուղիմէոսեան ցերեկներ առաջ բերեց. կոտորուեցին այնտեղ մօտ 300,000 հայեր։ Իսկ Կովկասում ստեղծուեց հայերիս համար մի ինկվիզիցիական ռէժիմ։

ԼԻՆՏՕՆ

Օրինակ։

ՀԱՅՈԳԻ

Օրինակ. սկսեցին հալածել մեր եկեղեցին. մեր կաթուղիկոսական իրաւունքները հասցրին զերոյի. մեր Սինոդը դարձրին իրենց պրոկուրորների համար մի կանցելիարիա. մեր ուսումնարանները փակեցին. փակեցին նաև մեր բարեգործական, հրատարակչական ընկերութիւնները. անասելի ճնշումների ենթարկեցին մեր լրագրութեանը, մեր թատրոնին. հայոց լեզուն, հայ հոգին արմատախիլ արին եղած ուսումնարաններից. հետևեալ՝ մի քանի տասնեակ հայ պաշտօնեաներին փոխարինեցին ռուսներով, որոնք, իբրև վամպիրներ, սկսեցին ծծել հայի վերջին համբերութիւնը. ռուս հասարակութեանը և այլազգիներին, նամանաւանդ վրացիներին, որեցին մեր զէմ և, իբրև անհաշտ թշնամիներ, կանգնեցրին մեզ իրար զէմ...

ԼԻՆՏՕՆ

Ինչպէս այժմ Թուրքերին։

ՀԱՅՈԳԻ

Եւ վերջապէս, իբրև գլուխ գործոց, խլեցին մեր եկեղեցական խղճուկ կալուածները, հասցնելով մեր հոգևորականութեանը մուրացկանութեան։

ԼԻՆՏՕՆ

(Ուզում է բան ասել, բայց փոխում է մտադրութիւնը)։ Ըհմ, ըհմ... յեսու՛։

ՀԱՅՈԳԻ

Եւ հայը չէր կարող բաւականանալ միայն արտունչ արտայայտելով. թէև այդ էլ էր արգելուած։ Մեր ձայնը չէր լսում. բողոքներս տեղ չէին հասնում. իսկ հասածներն էլ՝ թողնում էին առանց ուշադրութեան։ Բացագրութիւններս մերժում էին լրագրութիւններից, իսկ բարեմիտ լրագրներին՝ ցէնզուրան էր արգելը դառնում։

ԼԻՆՏՕՆ

(Խորհրդաւոր) Այո՜...

ՀԱՅՈԳԻ

Հայը պիտի դիմէր ապրրօրի։

ԼԻՆՏՕՆ

Հասկանալի է հիմա։

ՀԱՅՈԳԻ

Եւ սկսեց հատուցումը։ Մի քանի խիստ, զաղանաբարոյ

պաշտօնեաներին հետզհետէ սպանոտեցին, խողխողեցին... Առաջացաւ մի կատարեալ խուլ պատերազմ հայի և ռսի մէջ։ Գալիցիներ կատաղում էր։ Նրա հրեշաւոր ծրագիրները՝ մէկը յաջորդում էր միւսին։ Բայց չէ՞ որ անասունն անգամ սկսում է աքացիներ տալ կամ պոզահարել աջ ու ձախ, երբ իր կաշի վրայ զգում է կատաղի հարուածներ։

ԼԻՆՏՕՆ

Անշուշտ։

ՀԱՅՈԴԻ

Պէտք էր վերջ դնել ուրեմն և այդ մարդ—գազանի շահատակութեանց։

ԼԻՆՏՕՆ

Ամա՜... Ահա պատճառը...

ՀԱՅՈԴԻ

Ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Եւ ուրիշ ելք չկար։ Գալիցինն ազատուեց անխուսափելի մահից՝ նոյն հայի ջէնտելմենութեան շնորհիւ։ Հայ սէրբօրիստները շուղեցան իշխանուհու մի մազին անգամ դիպչել, որի յուսայատական արգելքների շնորհիւ, հազիւ փրկուեց նա՝ գլխից խորախոր վերքեր ստանալով միայն։

ԼԻՆՏՕՆ

Այդ արդէն յայտնի է։

ՀԱՅՈԴԻ

Գալիցինը իր ծանր վէրքերից ապաքինուեց։ Նա չէր կարող մարսել հայերից ստացած այդ մահացու վիրաւորանքը։ Նրա մտքում յղացաւ մի նոր դիւական ծրագիր.—«Խպառ ոչնչացնել հայութիւնը Կովկասից և թողնել միայն մի հատ հայի խրատելակ մուզէումի համար»։

ԼԻՆՏՕՆ

Ա՜. թուրքերի ձեռքով։

ՀԱՅՈԴԻ

Ինչպէս տեսնում էք։ Այդ ծրագրի հոտը սկսեց գալ անցեալ 1904 թւի երկրորդ կիսից։ Յանկարծ անդրկովկասի ռուսները խիստ թշնամական դիրք բռնեցին դէպի մեզ և մտան թուրքերի թեերի տակ։ Գաղտագողի տարածուել էր նրանց մէջ, որ իբր հայերը պիտի ռուսներին կոտորեն։

ԼԻՆՏՕՆ

Ահա՜...

ՀԱՅՈԴԻ

Խուլ պրոպոկացիան քանի գնում, աւելի ևս հրեշաւոր սարսափների էր հասնում։ Հայերի համար դա մի ցնդարան նորութիւն էր, որին նրանք ոչ մի նշանակութիւն չէին տալիս։ Թուրքերը թե առան և արդէն իրոխատական դիրք բռնեցին դէպի հայերը։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Իսկ մի բարձրատեսիճան պաշտօնեայ ասել է. «Հայերը, եթէ այդպէս շարունակելու լինիք, մենք թոյլ կտանք թուրքերին իրենց վաղուցայ հաշիւները ձեզ հետ տեսնելու և այնուհետև՝ երեք օրուայ մէջ՝ մի հատ կենդանի հայ չի մնալ Կովկասում։

ԼԻՆՏՕՆ

Արդէն Գալիցինի ծրագիրը...

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Անշուշտ։ Եւ այս խօսքերն ասուել է դեռ անցեալ տարուայ օգոստոսին։

ՀԱՅՈԴԻ

Իսկ այս թւի փետրվարի 8-ին այդ ծրագիրը գլուխ բերուեց Բագուի նահանգապետ իշխան Նակաշիձէի միջոցաւ։ Հետևանքների հետ դուք արդէն ծանօթ էք։

ԼԻՆՏՕՆ

Իսկ չփորձեցի՞ք ըողոքել կամ պաշտպանութիւն խնդրել։

ՀԱՅՈԴԻ

Փորձեցինք և եկանք այն համոզմունքի, որ չպէտք է բողոքել, այլ՝ գործել։

ԼԻՆՏՕՆ

Ապա ինչ դեր խաղացին ձեր յեղափոխականները։

ՀԱՅՈԴԻ

Մեծ դեր կատարեց մեր Դաշնակցութեան և Հնչակեան կուսակցութիւնների նուրբ հոտառութիւնը։ Բագւոյ առաջին կոտորածը աչքները բաց արեց և նրանք, նախատեսելով մեծամեծ բարդութիւններ, իսկոյն իրենց գործողութիւններն ուղղեցին դէպի ինքնապաշտպանութիւն և նեարդային տենդով, ինչպէս և ներկայումս, սկսեցին զինուել և զինել ժողովրդին։

Մի քանի ամիս ևս՝ և մեր ինքնապաշտպանության գործը կդրվի ամենահաստատ հիմքերի վրայ։

ԼԻՆՏՕՆ

Մթթէ կարծում էք, որ դեռ շատ պէտք է տևի այս գրությունը։

ՀԱՑՈԳԻ

Մենք կարծում ենք, ընդհարումների առաջին շրջանումն ենք միայն։

ԼԻՆՏՕՆ

Մթթէ։

ՀԱՑՈԳԻ

Այո։ Իսկ եթէ կառավարությունն ուզենայ, մի օրւայ մէջ կդադարեցնի ամեն ինչ։

ԼԻՆՏՕՆ

Իսկ եթէ չուզենայ։

ՀԱՑՈԳԻ

Մենք պիտի դադարեցնենք։

ԼԻՆՏՕՆ

Ի՞նչպէս։

ՀԱՑՈԳԻ

Երբ որ զինուած պատրաստ կլինենք և պաշտպանողական դիրքից կանցնենք յարձակողականի։

ԼԻՆՏՕՆ

Ահաա՜...

ՀԱՑՈԳԻ

Երբ թուրքերը կտեսնեն, որ մենք յարձակվել էլ գիտենք և ոչ պակաս սարսափներ տարածել։ Իսկական հաշտութիւնն այն ժամանակ կլինի։

ՄԻՐԱՔԵԱՆ

Պէտք է իմանալ նաև, որ թուրքերի այս ալարմունքները չպէտք է վերագրել դէպի մեզ տածած ատելության միայն, այլ գլխաւորապէս՝ համիսլամականության, որն ի վաղուց հետէ արծարծուում է նրանց մէջ՝ լուսիայն և ծածուկ։ Իշխանության այս դրդումները միայն նպաստեցին նրանց գործին։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Դեռ երկք տարի առաջ Դանձակի մզկիթից իշխանությունն ահագին քանակությամբ զէնքեր հանեց և շատերին

աքսորեց։ Եւ այս առաջին դէպքը չէ։

ՄԻՐԱՔԵԱՆ

Այսօր էլ արդէն սկսել են՝ յարձակվել նաև ռուս ու մալական գիւղերի վրայ, դիմադրել զէնքով իշխանությանն ու ոստիկանությանը և սպանոտել հետևակ, ձիաւոր և կազակ զինուորներին։

ԼԻՆՏՕՆ

Իսկ մեծ վնասներ հասցրին ձեզ թուրքերը։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ընդհանրապէս նրանք կարողանում են մեծ վնասներ հասցնել մեզ ամեն տեղ՝ միայն առաջին օրը, երբ յանկարծ, և միանգամայն անսպասելի մեզ համար, յարձակվում են մեր վրայ, իսկ այնուհետև էֆֆէկտը հայերինն է. եթէ, ի հարկ է... իշխանությունները չեն օգնում նրանց, իբր խաղաղեցնելու նպատակաւ։

ԼԻՆՏՕՆ

Այո... (Միջոց)։ Ապա ինչով բացատրել թուրքերի այդ ատելությունը դէպի ձեզ։

ՀԱՑՈԳԻ

Նրանով, որ մենք կոպտուրապէս, համեմատելով իրենց հետ, շատ բարձր ենք կանգնած։ Խաւարին սովորած աչքերի համար՝ անտանելի է փոքրիկ լոյսն անգամ։

ԼԻՆՏՕՆ

Այո, այո։ Մի երկու հարց ևս։

(Աղմուկ եւ իրարանցման ձայներ են լսւում փողոցից, ինչպէս եւ բաղաքապետների օսլոց)։

(Զորքն էլ շտապով մօտենում են եւ նայում լուսամուտներից դէպի փողոց)։

ՀԱՑՈԳԻ

Ահաա՜... (Մարուգեանին, առանձին) Մերոնք են մթթէ։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Դժւար։ Բայց գուցէ... (Գնում է դէպի աջ արագ)։

ՏԵՍԻԼ Ը

ՆՈՑՆՔ, առանց ՄԱՐՈՒԳԵԱՆԻ եւ ապա ԶԻՆԻՈՐ։

ԼԻՆՏՕՆ

Այս ինչ կնշանակէ։

ՀԱՑՈԳԻ

Այս օրերս պիտի յեղափոխական ցոյցեր անէին քաղաքում։ (Զանգ է տալիս. զալիս է զինուորը)։ Իմանալ իսկոյն ինչ է կատարուում դուրսը։ (Զինուորը գնաց)։

ԼԻՆՏՕՆ

(Նայելով փողոց) Ամենքն էլ փախչում են չնչասպառ, առանց յետ նայելու...

ՄԻՐԱՔԵԱՆ

Ահա մաքրուեց փողոցը։

ԼԻՆՏՕՆ

Հայերն էլ են մասնակցում ընդհանուր շարժմանը։

ՀԱՑՈԳԻ

Այն ամենից յետոյ, ինչ որ լսեցիք և տեսաք, կարող են արդեօք չմասնակցել։

ԼԻՆՏՕՆ

Հասկանալի է։

ՏԵՍԻԼ Թ

ՆՈՅՆՔ, ՄԱՐՈՒԳԵԱՆ և ԶԻՆՈՐ

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Մօտենալով Հայոդուն եւ գաղտնաբար)։ Մերոնք են։ Փորձում են առանց ռումբերի...

ԶԻՆՈՐ

(Ներս գալով ձախից)։ Ոչինչ բան։ Մէկը վազելիս է եղել, միւսն էլ նրա յետևից։ Իսկոյն մի քանիսն էլ, տեսնելով նրանց՝ ահաբեկուած փախչում են և մնացածներն էլ՝ նրանց յետևից...

ԼԻՆՏՕՆ

Էլէքտրականացած է օդը։ Մի չնչին անբնական շարժում և սարսափ, և փախուստ։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ահա խաղաղուեց։ Սկսեցին մարդիկ շարժուել փողոցում։

ԼԻՆՏՕՆ

Ուրեմն շարունակենք մեր խօսակցութիւնը։

(Ամենքը բռնում են իրենց տեղերը։ Զինուորը գնաց)։

ԼԻՆՏՕՆ

Դուք մի փոքր առաջ «խղճուկ» բառը գործադրեցիք ձեր

եկեղեցական կալուածների մասին։ Բայց ոչ ապաքէն այդ կալուածների արդիւնքներով էին ձեր կաթուղիկոսներն օգնութեան հասնում յեղափոխական շարժումներին։

ՀԱՑՈԳԻ

Սուտ է։ Սկզբից մինչև վերջը մատցածին։ Այդ կալուածների և միւս, կրօնական, եկամուտների չնչին արդիւնքներով հազիւ հազ պահպանւում էին մեր եկեղեցիները, ուսումնարանները, կաթուղիկոսութիւնը...

ԼԻՆՏՕՆ

Ի՞նչպէս։ Մի՞թէ չէր լսմանալ այդ Ռուս բարձրագոյն կառավարութիւնը։

ՀԱՑՈԳԻ

Կարող էր տրդեօք չիմանալ։ Մի՞թէ պարզ չէր այդ՝ իբրև ցերեկեան լոյս, իբրև մի ջինջ հայելի։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ընդմիանում ամեն ինչ կատարուում էր կառավարութեան նշանակած Սինոդի պրօկուրօրի կօնտրօլի տակ։ Սա չէր կարող ամենաճիշտ զեկուցումներ չտալ նաև վանքի եկամուտների ու ծախքերի մասին, իր գլխաւոր վարչութեան։ Մուկն անդամ չէր կարող անցնել մի որ և է ծակից, առանց այդ պրօկուրօրի գիտութեան։

ԼԻՆՏՕՆ

Ի՞նչպէս տպա...

ՀԱՑՈԳԻ

Ահա որտեղից է սկսւում գերագոյն կեղծիքը։ Ահա ինչպէս էին սիսալեցնում ուշխարհին։ Այդ ռուս բիւրօկրատիայի և խաւարամիտ լրագրութեան տենդենցիան է, իբրևց բարաքականութեան վարմունքն արդարացնելու համար։

ԼԻՆՏՕՆ

(Մտաբերող)։ Այդպէս, այդպէս... Ասացէք խնդրեմ. ճիշտ է որ հայերը ձգտում են տիրել ամբողջ Կովկասին մինչև Ռոստովի սահմանները Դոնի վրայ։

ՀԱՑՈԳԻ

Արտուրդ։ Սկզբից մինչև վերջը նոյնպիսի արտուրդ։ Դա ստեղծելի է նոյն ատրիբիցից ռուս ազգին էլ մեր դէմ դրդռելու համար։

ԼԻՆՏՕՆ

Իսկ կուզէին հայերն իրենց թագաւորն ունենալ։

ՀԱՑՈԳԻ

Ինչ ասեմ։ Չինուորը զինուոր չէ, եթէ նա չէ ուզենայ ժեներալութիւն ստանալ։

ԼԻՆՏՕՆ

Անկասկած։

ՀԱՑՈԳԻ

Եւ միթէ կարելի է մեղադրել մի ազգի, եթէ նոյն իսկ մի այդպիսի ձգտումն ունենայ։

ԼԻՆՏՕՆ

Երբէք։

ՀԱՑՈԳԻ

Բայց հաւատացէք ինձ, որ այդ էլ արդուլդ է։ Հայը երեխայ չէ, որ երեկայական յոյսերով զբաղուի։ Պարոն Մարուգեան, չնորհեցէք խնդրեմ Կովկասի ազգաբնակութեան քարտէզը։ (Առնելով Մարուգեանից եւ բանալով)։ Անա։ Մի հայեացք դցեք սրա վրայ։ Այս գոյնը հայերն են։ Ես լռում եմ։ Այս քարտէզը թող խօսէ ձեզ հետ և ապացուցի այդ հարցի ամբողջ ցնդաբանութեան մասին։

ԼԻՆՏՕՆ

(Ուշի ուշով նայելով քարտէզին)։ Հայերը հազիւ կազմում են վեցերորդ մասը ամբողջ ազգաբնակութեան... և... ցրուած են...

(Լսւում է փողոցից սմբակների ոռոփիւն)։

ՀԱՑՈԳԻ

Սպասեցէք։ (Ականջը դէպի փողոց ուղղելով)։ Սմբակների աղոսիւն։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Նայելով լուսամուտից)։ Գազակներ են։

ԼԻՆՏՕՆ

Եա. կարգը վերականգնելու համար։

ՄԻՐԱՔԵԱՆ

(Նոյնպէս)։ Երեսի։ Բաժանեցին երեք փողոցների վրայ...

ՀԱՑՈԳԻ

Շարունակենք ուրեմն։ Իսկ մեր թագաւորութեան մասին նոյն եզրակացութեանը կգաք, սէօր, քանի որ գիտեք արդէն, որ 4—5 միլիոն հայերը նոյնպէս ցրուած են երեք պետութեանց մէջ.—Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի։

ԼԻՆՏՕՆ

Գիտեմ, այո։

ՀԱՑՈԳԻ

Ուրեմն։

ԼԻՆՏՕՆ

(Անձը շարժում)։ Նոյնպիսի աբսուրդ։

ՀԱՑՈԳԻ

Աւելի ևս այդ ցնդաբանութիւնները ակներև կլինեն այն ժամանակ, երբ, կրկնիցէ Ռուսաստանը Տաճկաստանի հետ ընդհարումն կունենայ։ Այն ժամանակ, ռուսները մի աւելորդ անգամ ևս կճանաչեն հայերին և այժմեան իրենց պաշտպանած ու յաղթեցրած թուրքերին։ Այն ժամանակ ռուսը կհասկանայ, թէ իր անհեռատես քաղաքականութեամբ, ինչ մեծ սխալներ է արել։ Բայց... Ի՞նչ եմ ասում... Քաղաքականութիւնն ընդհանրապէս ոչ ամօթ ունի և ոչ խիղճ։

ԼԻՆՏՕՆ

(Ժպտում է։ եւ գլուխը շարժում)։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Գալիցինեան ծրագիրը մի ուրիշ անհրաժեշտութիւն էլ ստացաւ ներկայումս։

ԼԻՆՏՕՆ

Ո՞րպիսի։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Խանձած պահել ծայրագաւառների օտարազգաւան հպատակների գլուխները նոր ներքին խռովութիւններով, որ, Ռուսաստանի ներկայ յեղափոխական դրութեան համար, անհրաժեշտ էր։

ԼԻՆՏՕՆ

Ահաւասիկ...

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Վրացիների հետ՝ իր հաշիւն այժմ ինքն իշխանութիւնն է տեսնում, քանի որ նրանք, օգտուելով Պետութեան ներքին շարժումներից, կենդանութեան նշոյլներ ցոյց տուին։ Իսկ մեր դէմ էլ՝ սրած է պահում թուրքերին։

ԼԻՆՏՕՆ

Հաւանական է... Այո... Իսկ հայերը... Ապա ինչի՞ են ձգտում հիմա հայերը։ Միթէ ոչ մի ձգտումն չունեն։

ՀԱՅՈԳԻ

Թեթևամտութիւն կլինէր մեր կողմից, եթէ ասէինք՝ ոչնչի։ Բայց միթէ ինքն ըստ ինքեան հասկանալի չէ։

ԼԻՆՏՕՆ

Կուզէի ձեղանից լսել։

ՀԱՅՈԳԻ

Համեցէք։ Հայը ձգտում է միայն համամարդկային կենսունակ իրաւունքների։ Հայը չէ ուզում անջատուել ոչ Ռուսաստանից, ոչ Տաճկաստանից և ոչ Պարսկաստանից։ Նա միայն ձգտում է իր ազգային անյատականութիւնը պահպանել. ապրել իբրև մի կուլտուրական ազգ։ Եւ նա իրաւունք ունի այդ պահանջելու։

ԼԻՆՏՕՆ

Անշուշտ։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Իսկ այդ իրաւունքը ինքնիներով ու աղաչանքներով չի կարելի ձեռք բերել։ Բազմաթիւ դառն փորձերը հաստատեցին մեզ այդ։ Ինդիրն ու աղաչանքն անզօրութեան նշան են. իսկ զօրութեան կուլի մէջ՝ մահացուցեն և կործանիչ։

ՄԻՐԱՔԵԱՆ

Անշուշտ։ Եթէ մենք մեր բողոքների ու խնդիրների հեւանքներին սպասէինք՝ Գալիցինի ծրագիրը մարմնացած կլինէր այժմ։ Ո՛չ։ Հայն ինքն իրան պիտի պաշտպանէր, թէկուզ փայտերով, թէկուզ քարերով և ընկնէր անհաւասար կուի մէջ։ Իբրև քաջ, բայց ոչ թէ աղաչանքներով ու դատաչանքներով մարթաւոր իբրև ոչխար։

ՀԱՅՈԳԻ

(Խիստ զգուշացած)։ Այն հայը, որ դարերի ընթացքում շփումն է ունեցել հին Ասորեստանի, Բաբելոնի, Մարաց, Պարսից ազգերի հետ. որ ընդունել է համարեա առաջին քրիստոնէութիւնը և կրել է Զօրոաստրի և Մոհամմէդի հալածանքները. որ հետևել է դարերի ընթացքում ժամանակակից կուլտուրային և ունեցել է իր լեզուն, իր գրականութիւնը, իր պատմութիւնը, իր սէրը. որ նշմարելի օգնութիւն է հասցրել խաչակրաց արշաւանքներին. որ քաջութեան նոխազ էր դարձել Հալաքի արշաւանքների դէմ քրիստոնեայ Եւրոպայի հանդէպ. որ եղել է՝ չնորհիւ վեր-

աշխարհագրական դիրքի, այլ և այլ աշխարհակալների արշաւանքների մշտական ասպարէզը և անդադար ենթարկուել է նրանց աւարառու և տիրապետող ընազդումներին. որ յարատև կռիւ է մղել իրեն շրջապատող, ինչպէս վայրագ, նոյնպէս և կուլտուրական ազգերի հետ, ոչ միայն զէնքով, այլ հազարեակ տարիներով՝ իր բուն քրիստոնէական ոգին, իր ընդհանրական եկեղեցին, իր լեզուն, իր գոյութիւնը պահպանելու համար և այդպիսով հասել է մինչև օրս—այսօր միթէ պիտի նա մեռնի իբրև քաջ, կամ մարթուի իբրև ոչխար։ Ոչ, Միրաքեան։ Հայն այդպիսով չի աշխատայ։ Սա հայի համար մի չնչին փորձութիւն է։ Գլիմանայ արան էլ և կկարողանայ պատուով դուրս գալ այդպիսի դրութիւնից։ Հայը պիտի ապրէ։ Հայը դեռ պիտի առաջադիմէ։ Հայը երբէք չի մեռնի։

ԼԻՆՏՕՆ

(Մտածմունքով)։ Այո՛ .. Այդպիսի ազգը չի մեռնի։

ՏԵՍԻԼ Ժ

ՆՈՑՆՔ ԵՒ ՁԻՆԻՈՐ

(Զինուորը բերում է հեռագիրներ ու տուիս է Մարուգեանին։ Միւսները իսկոյն հարցական հայեացքով նայում են նրան։ Այդ նկատում է Ցղեակիսը)։

ԼԻՆՏՕՆ

Ինձ համար շատ բան պարզուց։ Ներեցէք պարոններ, որ ես խլեցի ձեր թանգագին ժամանակը։ Ընդունեցէք շնորհակալութիւնս և անկեղծ համակրանքս։ Սրտանց յաջողութիւն եմ ցանկանում։ (Սեղմում է երեքի ձեռքերն էլ)։

ՀԱՅՈԳԻ

Ուրախ եմ, որ կարողացանք ձեզ փոքր ի շատէ բաւարարութիւն տալ։ Բարեաւ գնաք։

ՄԻՐԱՔԵԱՆ և ՄԱՐՈՒԳԵԱՆ

Գնաք բարեաւ։

ՏԵՍԻԼ ԺԱ

ՆՈՑՆՔ, առանց ԼԻՆՏՕՆԻ և ՁԻՆԻՈՐԻ

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Կարդալով հեռագիրը)։ Ամեն կողմ շրջում են սէրիզներ և

Ջուշի կաշերը ցրելով, գրգռում են թուրքերին։ Նկրսէս։ Ոչ-ոչ էնենք։

ՀԱՑՈԳԻ

Բայց և այնպէս շարունակում են...

ՄԻՐԱՔԵԱՆ

Ան, եթէ մի երկու ամիս էլ...

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Երկրորդը)։ Թուրքերը նոքից խմբերով երևացել են խնձորեսկի, Աբաբի և Դիզի գիմաց։

ՀԱՑՈԳԻ

Սատ, բարդութիւններ։ Իսկոյն հեռագրել Խեչանին, որ նա ուսկի ապսհով տեղերից մեր կարիճներին փոխադրի և տասական հոգի բաժանի այդ գիւղերի վրայ։ Միրաքեան, գրիր խընդրեմ։ Պէտք է աշխատել ի զուր զոհեր չտանք։

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Անշուշտ։ Թէև թուրքերը տասնապատիկ աւելի զոհեր են տալիս։

ՀԱՑՈԳԻ

Եթէ նրանք կկտրեն իմ մի մասը, իսկ ես նրանց ամբողջ ձեռքը, այնուամենայնիւ չի թեթևանալ իմ վէրքը։ Շարունակիր, Մարուքեան։

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Կարդում է նրբորդը)։ Մեծամեծ վնասներ հասցրին Ամասիայի վանքին. տարան թանգագին իրեղէններն ու սրբութիւնները։ (Վրդովուած)։ Տեսնում էք։

ՄԻՐԱՔԵԱՆ

Վայրագներ։

ՀԱՑՈԳԻ

(Դրգռուած ու մտածմունքով)։ Արդէն իրենց յանդգնութիւնները նորոգում են... և մենք զէնք չունենք։

ՄԻՐԱՔԵԱՆ

(Խիստ դրգռուած) Եւ դեռ իշխանութիւնները բռնատում են մեր բերիլ սուած զէնքերը, որ հայ ժողովուրդն ուզում է ձեռք բերել իրեն պաշտպանելու համար, ծախելով իր միակ անասունը, իր մի կտոր հացը, իր վերջին պղինձն ու փալասը...

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Նոյնպէս) Այս ինչ կուրութիւն է վերջապէս։

ՄԻՐԱՔԵԱՆ

(Նոյնպէս) Մենք պէտք է ուրեմն շարունակենք ցեղ խլել այդ իշխանութիւններից տասնապատիկը և առանց միջոցների խարուեանք։

ՀԱՑՈԳԻ

Անշուշտ։ Քանի որ, ազատելով հայութիւնը ջնջումից, ազատում ենք նաև Անդրկովկասը համիդական ոտնձգութիւններից։ Կարսը, Մարուգեան և այդ հեռագիրը։

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Կարդում է)։ Անմիջապէս ուղարկեցէք հարիւր բուրլի։ Քաջալերանք։

ՀԱՑՈԳԻ

(Վրդովուած մտահոգութեամբ)։ Համեցէք։ Բազէնն էլ, Վարոնն էլ, սա էլ հրացաններ են պահանջում և իրար յետեւից...

ՄԻՐԱՔԵԱՆ

Եւ զանազան կետերից։

ՀԱՑՈԳԻ

Դա նշանակում է՝ աւելի մեծ փոթորիկներ են սպասում գավառներում, քան մենք կարծում ենք։ Հեռագրեցէք Ալէկսոլ, որ իրենց գլուխները թէկուզ վայր դնեն, միայն մեր պահանջները ժամ առաջ յաջողեցնեն. ապա թէ ոչ մենք կորած ենք։ Բայց չէ, այդ հեռագիրը ինքս կգրեմ։

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Հարիւր հրացան. միանգամ և անմիջապէս...

ՀԱՑՈԳԻ

(Կտրուկ)։ Մեզանից են պահանջում, մենք էլ պէտք է տանք։

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Բայց ինչպէս և որտեղից։

ՀԱՑՈԳԻ

(Հետզհետէ աւելի գրգռուելով)։ Թշնամին այդ գիտէ և օգտուում է։ Ես այլ ևս ոչինչ չեմ ուզում իմանալ։ Ճարեցէք, ստեղծեցէք, որտեղից և ինչպէս ուզում էք և այն չատ շուտ։ Պէտք է գործ դնել խելքի և հնարագիտութեան ամբողջ ստեղծագործական ոյժ. ապա թէ ոչ մենք կտուժենք. ի զուր մարդիկ կկոտրուին, ի զուր գիւղեր կսրիբուեն։ (Նեսրդային)։ Չէ նը, զէնք պէտք է ձեռք բերել, նոյն իսկ արեան գնով, նոյն իսկ մեր հոգու գնաճաւանով։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Էլ ճար չկայ։ պիտի ուղարկենք մեր գինուորներն ղէնքերը։

ՄԻՐԱՔԵԱՆ

Բացի այդ պիտի մանենք քաղաքիս տղղարնակութեան մէջ և ժողովենք կարելոյն չափ շատ զէնքեր, թէկուզ կրկնակի թէկուզ եռակի գնելով։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Անշուշտ։ Ըստ երևոյթին նորանոր և շուտափոյթ պահանջները կրազմանան։

ՀԱՑՈԳԻ

Անկասկած։ (Կատաղի)։ Մարուգեան, Միրաքեան, դաշտանն ու գնտակը հրապարակ հանեցէք, ռումբերով ղղրղեցրէք ամբողջ նշխարները։ Ձուչիի և Բաքվի աւերմունքն ու սարսափն այստեղ նորոգեցէք։ խառնեցէք ու տոկն ու վրայ արէք ամբողջ դժոխքը... միայն ղէնք տուեցէք ինձ, ղէնք հասցրեցէք ինձ... և այն շուտով, շուտով, շուտով...

(Երիքն էլ կաշկանդուած են լսուած մարերով։ Միրաքեանն իբր նոր միտք յղանալով, կանչում է Հմայեակին)։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆՈՑՆԱՐ ԵՎ ՀՄԱՑԵԱԿ

ՀԱՑՈԳԻ

(Մինչեւ որ կարգադրութիւն կանէր Միրաքեանը, յանկարծ ճակատին խփելով գոռում է) Է՛վրիկա։ (Հոտնուում է նեարդային ծիծաղ, որն արտայայտում է փրկութեան միակ ելք ու վերին ծայր ուրախութիւն) Հա հա հա՜... (Արագ մօտենում է հեռախօսին։ Զղային ազդանշան։ Ամենքն էլ հետաքրքրութեամբ հետեւում են Հայոգուն։ Պատահաբար հեռախօսում)։ Միացրէք իսկոյն № 138-ի հետ։ (Միջոց։ Ազդ)։ Ո՞ր համարն էր։ Ո՞վ էր։ Կանչեցէք իրեն, Վայսին։ (Միջոց։ Ազդ)։ Պարոն Վայս։ Ձեզ մօտ հիմա ուրիշ մարդ չկայ։ (Միջոց)։ Արդէն հեռացրիք։ Լաւ։ Լսեցէք ուրեմն։ Ո՞րքան քնրդանի, Մաուզերի և միւս սիստեմների արագաձիգ և յուսալի հրազէններ ունէք ձեր պահեստում. հաշուեցէք նաև Մաուզերի ու Բորխարդի ատրճանակները։ Ինչպէս։ Առանց վկայականի ոչ մի հատ չէք տար։ Միամիտ եղէք։ վկայականներ վերկայացուեն։ Քանի հատ ունէք։ Մօտ երկու հարիւր տասնմեկ։

Իսկ փամփուշտները։ Ձաշ լաւ։ Բոլորի գումարն ինչ է ելնելու։ Քսան 15000 ռուբլի։ Ձաշ լաւ։ Ոչ տքի բանն մի առէք։ Ով իմ թոռ։ Հիմա կուղարկեմ իմ ներկայացուցչին՝ կիսմանաք։ (Գգակելու աքցն)։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Բայց ինչպէս և ոյրտեղից մեզ վկայականներ ու գրամ։

ՀԱՑՈԳԻ

Իսկոյն։ (Կանչելով աջ դռնից)։ Արմենեան։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆՈՑՆԱՐ ԵՎ ԱՐՄԵՆԵԱՆ

ՀԱՑՈԳԻ

Ո՞րքան գումար ունենք կանխիկ։

ԱՐՄԵՆԵԱՆ

10881 ռ. 96 կ. որից 8000-ը այսօր սարցվեց։

ՀԱՑՈԳԻ

Հիանալի։ Միրաքեան, այս ցոլէիս կտանես այդ գումարը Վայսին։ Դաղտնի կիսօրոկ նրա հետ։ Մի ռաբ մի կ'հաշուես և կցուցակագրես նրա մօտ եղած հրազէններն ու փամփուշտները։ Ձեռքիդ եղած գումարը կտաս նրան և կպատուիրես, որ այդ բոլորն ապանձնացնի։ Ամեն նախապատրաստութիւն պիտի տեսնի նա, որ ոչ մի անելիք աչքի չընկնի։ Աւելորդ մարդ չունի երեկոյեան ժամի 8-ից խանութում և նրա շուրջը։ Անհրաժեշտ մարդկանց կաշառել։

ՄԻՐԱՔԵԱՆ

(Ցկարողանալով զսպել իր ուրախութիւնը)։ Հրաշալի միտք... Ուրեմն մեր խուզարկու խմբի վարպետութեան պիտի դիմենք։

ՀԱՑՈԳԻ

Անշուշտ։ Իսկ մեր մտերը կիրեն և կեղաւորուն երկու ժամուայ մէջ։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Իսկ Վայսը միւս ռաւաղ կայարանի սրբիկանութեան ից պահեստի կողոպտման մասին և (ուրախ շփելով իրար ձեռքերը) ընդհանուր վկայականը պատրաստ է։

ՄԻՐԱՔԵԱՆ

Այս գիսրեմը պէտք է մոցնել և միւս քաղաքներում։

ՀԱՑՈԳԻ

Միրաքեան, շտապիր։ Իսկոյն գրպանդ առ և գնա։ Ցպակաղը

կլրացնենք վաղը՝ մինչև ժամի 10-ը։ Իսկ եթէ Վայսը... ով գիտէ... անհամաձայնութեան նշաններ ցոյց տայ... աչքերդ այնպէս կ'ոլորես վրան, որ...

ՄԻՐԱՔԵԱՆ

Այդ իմ բանն է... (Գնալով դէպի աջ սենեակը) Գնանք Սմինեան։ (Գնային)։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՀԱՑՈԳԻ ԵՒ ՄԱՐՈՒԳԵԱՆ

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ժամանակը շատ կարճ որոշեցինք. այդ գումարը չի կարելի հասցնել մինչև ժամի 10-ը։

ՀԱՑՈԳԻ

Ինչ անհամբերն ես, Մարուգեան։ (Մօտենում է հառախօսին։ Ազդ)։ Միացրէք № 206-ի հետ։ (Միջոց. ազդ)։ Ո՞ր համարն էք։ Շատ լաւ։ Խնդրեցէք պ. Դիմաքսեանին ապարատի մօտ։ (Միջոց. ազդ)։ Ո՞վ էք։ Վաղը մինչև ժամի 10-ը կուղարկէք 5000 ր. Ինչպէս։ Պարոն Մարուգեանը կգայ։ (Փակման ազդ)։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ուրեմն վաղը կունենանք 260 հրաղէն Վայսից և մօտ 60—70 ռատիկանատից։

ՀԱՑՈԳԻ

Եւ հէնց այս գիշեր կարգադրիր ուղարկել այդ հրաղէնները։ (Խիստ)։ Պատուիրիր, որ ճանապարհին ամենաշնչին կորուստի համար՝ մեր յուղարկուներն իրենց գլխովն են պատասխանատու։

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՈՑՆՔ ԵՒ ՋԻՆԻՈՐ

(Զինուորը բերում է նոր հեռագիր. Մարուգեանը մեծ անհանգստութեամբ առնում է եւ կամենալով բանալ, ացքը ընկնում է հասցէին)։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Սա ձեր հասցէովն է։

ՀԱՑՈԳԻ

(Կարծելով նոր զէնքերի պահանջ կամ փոքորիկների լուր է լինելու, նոյնպիսի անհանգստութեամբ բանում է եւ կարդում, հետզհետէ, երեսին անասելի ուրախութիւն արտայայտելով)։ «Ալէկսալ. Մեր

դատած հանքից դուրս բերեցինք հազար փութ զանգուած քարախառն. կշռունակենք հանել մինչև վերջը, եթէ չբի մեր վրայ վերին հողային շերտը։ Հանքը խիստ երկիւղալի է, բայց և խիստ առատ։ Փութը մեզ նստում է տաս ռուբլի»։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Ուրախութեան դղրդանակների հոսած)։ Տասն ռուբլի։ Կեցցեն մեր խուղարկու խմբերը։

ՀԱՑՈԳԻ

(Նոյնպէս)։ Երկինքն էլ է գալիս մեզ օգնութեան։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Նոյնպէս)։ Այդտեղ բոլորն էլ իսկական բերդաններ են և ամենալաւ վամփուշտներ։

(Զինուորը ոգեւորուած դնում է ծախը)։

ՏԵՍԻԼ ԺԶ

ՀԱՑՈԳԻ ԵՒ ՄԱՐՈՒԳԵԱՆ

ՀԱՑՈԳԻ

Դէ, սիրելիս, հորթային ուրախութիւնը մեզ օգուտ չի բերիլ։ Իսկոյն հեռագրիր նախ՝ այդ բերդանները, ամբողջ հազարն էլ, Ալէկսալոլից անմատչելի ճանապարհներով ուղարկեն Զանգեզուրի, Շուշիի և Ջիվանշիրի գաւառները՝ շրջանային կոմիտէներին և երկրորդ՝ որ ամեն ջանք գործ դնեն, ամենագահ ախորժակները կաշառեն, ամեն ինչ զոհեն, միայն թէ յաջողեցնեն մինչև վերջին հրաղէնը, մինչև վերջին փամփուշտը դուրս բերել այնտեղից։ Իսկ կոմիտէներին պատուիրիր ընդունել հրաբերել այնտեղից։ Իսկ կոմիտէներին պատուիրիր ընդունել հրաղէնները, անմիջապէս հասցնել ամենակարճագոյն կետերը և խիստ դիմադրութեան պատրաստուել։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Իսկոյն։ (Նստում է գրելու)։ Այդ դէպքում ի դուր չատպեցինք Վայսի հետ։

ՀԱՑՈԳԻ

Երբէք, երբէք։ Մեզ տասնակ հազար հրաղէններ ին հարկաւոր և ոչքան շուտ, այնքան լաւ։ Օօ՜... երանի՜ թէ ամբողջ կաւոր և ոչքան շուտ, այնքան լաւ։ Օօ՜... երանի՜ թէ ամբողջ հրաղէններ դառնային և լեռների քարերը անտառների ծառերը հրաղէններ դառնային և լեռների քարերը վամփուշտներ... Այն ժամանակն էլ, այդ բոլորը մի օրում ձեռք բերելու համար՝ ես կդնէի իմ ամբողջ կեանքս, կծախէի հոգիս,

միայն թէ կարելի լինէր մի օր առաջ, մի ժամ առաջ, մի վայրկեան առաջ այդ հրազէնները հասցնել այն տեղերը, ուր կարօտ են ինքնապաշտպանութեան։

(Հեռախօսի զոյգ։ Մարուգեանն խլոյն մօտենում է ապարատին եւ պատասխանում է Նոյնպիսի ազդով)։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Մարուգեան։ Դուք ով էք։ Ի՞նչ կայ։ Երկու ռումբ նետեցին։ Ո՞րտեղ։ Միքայէլեան փողոցում։ Ո՞վքեր են։ Մերոնք։ Ուրիշ։ Ամբողջ ոստիկանութիւնը հաւաքում է։ Կազակներ էլ։ Մարզկային վնաս հօ չկայ։ Եւ ոչ մի։ Լաւ։

ՀԱՅՈԳԻ

(Կանչելով աջ դռնից)։ Համայնակ։

ՏԵՍԻԼ ԺԸ

ՆՈՅՆԲ և ՀՄԱՅԵԱԿ

ՀԱՅՈԳԻ

Այս ինչ են անում յիմարները. օրը ցերեկով։ Ակլի լաւ չէր գիշերը։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Գիշերը Վայսի գործին էլ կ'օգնէր։

ՀՄԱՅԵԱԿ

Մեզ ինչ, պ. Հայոգի։ Մենք կարգադրեցինք, մնացածը իրենք գիտեն։ Երեխաները չեն։

(Լսւում է բեմի խորքից աջ եւ ձախ կողմերից մի մի աստճանակներ։ Ձայներ, որից յետոյ նաև բաղապահների սուլոց, իրարանցումն եւ փախուստ)։

ՀԱՅՈԳԻ

Ա՞յս ինչ է։ Այստեղ էլ միթէ։

ՀՄԱՅԵԱԿ

Երեւի այդպէս են յարմար գտել։

ՀԱՅՈԳԻ

(Գլուխը ներողամտութեամբ շարժելով) ՀարաճՀինե՛ր։

(Բարձրանում է մի խիստ դղրդիւն փողոցում։ Լուսամուտների փեղկերը՝ ինքնին և ուժգին՝ բացւում են։ Բեմում եղածները բոպէապէս օրօրւում են իրենց տեղերում։ Լսւում է երկրորդ ռումբի պայթիւն և ապա մի քանի տեղերից կրկին բաղապահների սուլոց)։

ՀԱՅՈԳԻ

(Իր վրայ գործած վայրկենական ազդեցութիւնից յետոյ)։ Մի գուցէ զոհեր...

ՀՄԱՅԵԱԿ

Զոհ չի կարող լինել։ Նոր սիստեմն են գործադրել։ Փորձում են այժը։

(Հայոգին զանգ է տալիս։ Գալիս է զինուորը)։

ՏԵՍԻԼ ԺԸ

ՆՈՅՆԲ, և ԶԻՆԻՈՐ

ՀԱՅՈԳԻ

(Զինուորին)։ Մարզկային վնաս...

ԶԻՆԻՈՐ

Եւ ոչ մի հատ։

ՀԱՅՈԳԻ

Իսկ մերոնք։

ԶԻՆԻՈՐ

Թռան։

ՀՄԱՅԵԱԿ

Թռան ուրեմն և ոստիկանատան զէնքերը։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ջան տղերք։

ՀԱՅՈԳԻ

Ղուտով, Ղուբիւր աղա, ասպարէզը երկոխս առաջ էլ բաց կլինի և մենք կը փորձենք մեր այժերը։

(Լսւում են կազակ ձիաւորների ամբակների տրոփիւնը դատարկ փողոցում)։

Արագ իջնում է

Վ Ա Ր Ա Դ Ո Ց Ը Ը

ՆՈՑՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՔՍՆԵՐԸ։

	Ր. Կ.
ԽԷՀՕՅԻ ԹՈՒԶԸ	
ֆարս-վոդեվիլ 1 արարուածով. սպառած. գինն է	— 50
ՄՕԴԱ	
կոմեդիա մէկ արարուածով. սպառած. գինն է	— 50
ԿՈՒՍՊԱՏՃԱՌԸ ԵՍ ԷԻ	
վոդեվիլ երկու արարուածով. սակաւաթիւ. գինն է	— 50
ԷԼ. ՉԱՐԷՍ-ԻՆՉ կամ ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐ	
կատակերգութիւն մէկ արար. սակաւաթիւ. գինն է	— 50
ՍԷՐ ԿԱՄ ՄԱՀ	
պիէս մէկ արարուածով. սակաւաթիւ. գինն է .	— 50
ԶՐԿԱՆՔԻ ՁՈՀ	
դրամա 4 գործ. և 6 պատկ. սպառած. գինն է	— 80
ՉԱՐՔ	
կատակերգութիւն մէկ արարուածով (մէկ գրքում. սպառած. գինն է)	
ՍԱՐՍԱՓԵԼԻ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ	
(բեմական պատմութիւն) (մէկ գրքում. սպառած. գինն է)	1 —
ՎԱՅՐԵՆԻ	
կատակերգութիւն մէկ արարուածով, գինն է .	— 50
ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԿԻ ՏԱԿ	
դրամա հինգ արարուածով, գինն է . .	1 —
ԴԱՄՈԿԼԵԱՆ ՍՈՒՐ	
դրամա երեք արարուածով, գինն է . .	— 75
ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ	
էպիգոդները հինգ արարուածով և ապօթէոզով 1905 թուի հայ-թաթարական ընդհարումներից, գինն է	1 —
ԻՆՏԷՐՎԻՒ	
ևս մի էպիգոդ. յաւելուած «ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ» գրքի	— 25
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ	
ՈՃԲԱԳՈՐԾԻ ԸՆՏԱՆԻՔ (1 գրքում. սակաւաթիւ. գինն է)	2 —
ՀԵՐԿՈՒԼԷՍ . . .	

Վերոյիշեալ պիէսները վաճառւում են Երևանում՝ հեղինակի մօտ և Տփխիսում՝ Կենտրոնական և Գուտեմբերգ գրավաճառանոցներում։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ
Эривань, Эмину Терт-Григорянцу

Հայաստանի Ազգային գրադարան
NL0432533

58261